ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2018, 71, № 1,

IRG ԾՐԱԳՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

© 2018թ. Սահակյան Լ.

2017թ. հոկտեմբերի 25-27 Ուկրաինայի Գիտությունների Ազգային Ակադեմիայի, Կիևի Ս.Ի. Սուբբոտինի անվան Գեոֆիզիկայի ինստիտուտում տեղի ունեցավ Հայ-ֆրանսիական գիտական համագործակցության շրջանակներում անցկացվող միջազգային փորձագիտական խմբի (IRG) կողմից իրականացվող “Փոքր Կովկասի լեռնաշղթայի երկրադինամիկական զարգացումները՝ ազդեցությունը բնական ռեսուրսների, ակտիվ տեկտոնիկայի և ռիսկի վրա” թեմայով ծրագրի եզրափակիչ կոնֆերանսը:

Կոնֆերանսին մասնակցում էին ծրագիրը կատարող երկրների՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Ռումինիա, Ֆրանսիայի ներկայացուցիչները: Հայկական կողմից ե.գ.դ. Ա. Ավագյանը (երկու զեկուցում) և ե.գ.թ. Լ. Սահակյանը հանդես եկան համապատասխանաբար՝ «Արարատյան գոգավորության տեկտոնիկան» ու «Նախապատմական մարդու վկայությունները երկրաշարժերի մասին» և «Էոցենի մագմատիկ ապարների երկրաքիմիական ուսումնասիրությունները և երկրադինամիկ պայմանները» զեկուցումներով: Գիտաժողովի նյութերը տպագրվել են Ուկրաինայի Ազգային Ակադեմիայի «Геофизический журнал» ամսագրում՝ 2017, т. 39, N 4, с. 77-124. http://journals.uran.ua/geofizicheskiy/:

Տեղի ունեցավ դաշտային էքսկուրսիա՝ Ուկրանիայի բյուրեղային հիմքի հյուսիսային հատվածում գտնվող հայտնի ռապակիվի-գրանիտ-անորթոզիտային Կոռոստենի պլուտոնի տարածքում:

Քննարկվեցին հետագա, համատեղ ուսումնասիրությունների հնարավորությունները: